



www.printo.it/pediatric-rheumatology/AM/intro

Դեղորայքային բուժում

Տարբերակ 2016

3. Ներերակային իմունոգլոբուլիններ

3.1 Նկարագրություն

Իմունոգլոբուլինները հակամարմնի հոմանիշն են: Ներերակային իմունոգլոբուլինները (IVIG-ՆԵԻԳ) պատրաստվում են առողջ արյան դոնորներից ստացված մեծ քանակությամբ պլազմայից: Պլազման արյան հեղուկ մասն է: Ներերակային իմունոգլոբուլիններն օգտագործվում են այն երեխաների բուժման համար, որոնք ունեն իմուն համակարգի որևէ հիվանդություն, որի պատճառով սեփական հակամարմիններն անբավարար են արտադրվում: Այնուամենայնիվ ներերակային իմունոգլոբուլիններն ազդեցության մեխանիզմները մնում են դեռևս չբացահայտված և տարբեր են տարբեր պարագաներում: Ներերակային իմունոգլոբուլիններն արդյունավետ են նաև որոշ աուտոիմուն և ռևմատիկ հիվանդությունների ժամանակ:

3.2 Դոզան / նշանակման եղանակները

Սրանք տրվում են ներերակային ներարկման ձևով, տարբեր սխեմաներով՝ կախված հիվանդությունից:

3.3 Կողմնային ազդեցությունները

Կողմնային ազդեցությունները հազվադեպ են և ընդգրկում են անաֆիլակտոիդ (ալլերգիկ) ռեակցիաներ, մկանացավեր, տենդ և գլխացավեր ներարկման ընթացքում, գլխացավեր և փսխումներ (պայմանավորված մենինգեալ թաղանթի ասեպտիկ, այսինքն ինֆեկցիայի հետ կապ չունեցող գրգռումով) ներարկումից հետո 24

ժամվա ընթացքում, որոնք անցնում են ինքնուրույն:
Այս կողմնային ազդեցությունները անցնում են ինքնուրույն: Որոշ հիվանդների մոտ, մասնավորապես, ովքեր ունեն Կավասակիի հիվանդություն և հիպոալբումինեմիա, կարող է նկատվել զարկերակային ճնշման արտահայտված իջեցում ՆԵԻԳ (IVIG) ներարկման ժամանակ. նման հիվանդներին պահանջվում է ուշադիր հսկողություն փորձված թիմի կողմից:
ՆԵԻԳ (IVIG) չի պարունակում ՄԻԱՎ-ի, հեպատիտի և այլ վիրուսներ

3.4 Ցուցումները հիմնական մակական ուժմատիկ հիվանդությունների ժամանակ

Կավասակիի հիվանդություն
Յուլվենիլ դերմատոմիոզիտ

Նորանոր դեղեր են ստեղծվում Մանկական Ռևմատոլոգիական Միջազգային Փորձարկումների Կազմակերպության (PRINTO) և Մանկական Ռևմատոլոգիական Համագործակցական Հետազոտական Խմբի (PRCSG at www.prcsg.org) դեղագործական ընկերություններում և կլինիկական հետազոտողների կողմից: PRINTO և PRCSG ներգրավված են պրոտոկոլների, հիվանդության պատմությունների, վերանայման, տվյալների հավաքագրման, տվյալների վերլուծման և բժշկական գրականությունում հաշվետվության մեջ:

Մինչև ձեր բժիշկը իրավունք կունենա նշանակել նոր դեղամիջոց, պետք է մանրամասն ստուգվի դրա անվտանգությունը և հիվանդին բուժելու կարողությունը կլինիկական փորձերով: Սովորաբար դեղի օգտագործումը երեխաների մոտ հաջորդ քայլն է մեծահասակների մոտ դրանց օգտագործումից հետո, հետևաբար որոշ դեղեր կարող են կիրառվել միայն մեծահասակների մոտ: Թույլատրելի դեղորայքների աճի հետ զուգահեռ նվազում են առանց գրանցման դեղերի օգտագործումը: Դուք կարող եք օգնել նոր դեղերի զարգացմանը՝ մասնակցելով կլինիկական փորձերին:

Ավելի շատ տեղեկատվություն կարող եք գտնել հեռևյալ կայքերում.
PRINTO www.printo.it; <https://www.printo.it/pediatric-rheumatology/>
PRCSG www.prcsg.org

Ընթացքում գտնվող կլինիկական փորձեր
www.clinicaltrialsregister.eu/
www.clinicaltrials.gov

Եվրոպայում երեխաների համար նոր դեղորայքի զարգացման
համաձայնեցված պլաններ

www.ema.europa.eu/ema/index.jsp?curl=pages/medicines/landing/pip_search.jsp&mid=WC0b01ac058001d129